ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԱՊՁԲ-21-10/1-8 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «17» 04 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս.Մահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Օստինատո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ.Հարությունյանի, ով գործում է «Օստինատո» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **15.02.2021թ.** կնքված N **ԳՀԱՊՁԲ-21-10/1-8** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանսական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշմամբ, Ծանուցում N 7-ՊՆ 06.03.2021թ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով շինանյութերի (այսուհետ՝ Ապրանք) գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն N 1 և N 2 Հավելվածների:

1.2 Վաճառողը պարտավորվում է Գնորդի հանձնարարությամբ մատակարարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող Ապրանք՝ Համաձայնագրի N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Գնորդն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի N 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատակարարման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է **9 960 000 /ինը միլիոն ինը հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդն նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2021թ.:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում և Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի և Պայմանագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների մատակարարման դեպքում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Ս. ՄԱՀԱԿՅԱՆ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«Օստինատո» ՍՊԸ
ք.Երևան, Շիրազի փ. 3/1
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արաբկիր մ/ճ
Հ/Հ 2050622024161001
ՀՎՀՀ 01250759
Տնօրեն
Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Հավելված N 1**
**N ԳՀԱՊՁԲ-21-10/1-8 պայմանագրի**
**N 1 Համաձայնագրի**

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | CPV կոդ | անվանումը | Չ/մ | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը/ժամկետը | |
| | | | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ |
| 1 | 44161130/503 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D, 20) | մետր | 295 | 590000 | 2000 | ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 1000 | 1000 |
| 2 | 44161130/504 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D, 25) | մետր | 380 | 760000 | 2000 | ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 1000 | 1000 |
| 3 | 44161130/505 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D, 32) | մետր | 695 | 1390000 | 2000 | ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 1000 | 1000 |
| 4 | 44161130/506 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D, 40) | մետր | 1480 | 1480000 | 1000 | ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 1000 | - |
| 5 | 44161130/507 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D, 50) | մետր | 2100 | 2100000 | 1000 | ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 1000 | - |
| 6 | 44161130/508 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային փական D63) | մետր | 3640 | 3640000 | 1000 | ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 1000 | - |

**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«Օստինատո» ՍՊԸ-ի տնօրեն

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Հավելված N 2**
**N ԳՀԱՊՁԲ-21-10/1-8 պայմանագրի**
**N 1 Համաձայնագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքների | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | CPV կոդ | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | |
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ. | Ընդամենը |
| 1 | 44161130/503 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D 20) | 295000 | 590000 | 590000 | 590000 |
| 2 | 44161130/504 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D 25) | 380000 | 760000 | 760000 | 760000 |
| 3 | 44161130/505 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D 32) | 695000 | 1390000 | 1390000 | 1390000 |
| 4 | 44161130/506 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D 40) | 1480000 | 1480000 | 1480000 | 1480000 |
| 5 | 44161130/507 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D. 50) | 2100000 | 2100000 | 2100000 | 2100000 |
| 6 | 44161130/508 | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային փական D 63) | 3640000 | 3640000 | 3640000 | 3640000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՄԱՀԱԿՅԱՆ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«Օստինատո» ՍՊԸ-ի տնօրեն

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ